Թեմատիկ պլան
Գրականություն
9-րդ դասարան
Տարեկան ժամաքանակ՝ 102

Հ	Ժամ	Թեմա	Վերջնարդյունք
		ԱՌԱՋԻՆ	ԿԻՍԱՄՅԱԿ
	2	**Անցածի կրկնություն**	
	4/1	**Մեսրոպ Մաշտոցի** կյանքն ու գործունեությունը:	• **Ներկայացնի** Մեսրոպ Մաշտոցի կյանքի հիշարժան դրվագները: • Կենսագրությունից ելներով՝ **գնահատի** Մաշտոցի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում: • **Արտահայտի** սեփական կարծիք Մաշտոցի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը **կապի** իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ: • Մաշտոցին **ներկայացնի** որպես Հայ առաքելական եկեղեցու սրբերի շարքին դասվող կերպար: • Մեսրոպի կյանքին և գործունեությանն առնչվող փաստերի միջոցով հասարակական հարաբերությունների, միջավայրի, անհատի գործի արժևորման քննություն **կատարի:**
	4/2	**Հայ գրերի գյուտը**	• **Բնութագրի** գրերի գյուտը հին և միջնադարյան գրականության բովանդակության, պատկերային համակարգի, ազգային արժեքների, ժամանակի և տարածության համատեքստում: • **Գնահատի** Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դերը հայ ժողովրդի կյանքում: • **Մեկնաբանի** այբուբենի, հին և միջնադարյան գրականության դերը ազգային արժեհամակարգի դրսևորման և մշակութային արժեքների պահպանման գործում (Մեսրոպ Մաշտոց): • **Գնահատի** Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դերը հայ ժողովրդի կյանքում: • **Արժևորի** գրերի գյուտը:

	4/3	**Հայ գրականության սկզբնավորումը** (ներածական խոսք)	• **Ներկայացնի** հայ հին գրականության ընդհանուր առանձնահատկությունները: • **Արժևորի** ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակությունը: • Ստեղծած երկերը **դիտարկի** որպես մեր ժողովրդի գոյատևման, զարգացման և առաջընթացի նախապայման: • **Գնահատի** անհատի, ընտանիքի, հասարակության ժառանգած ավանդույթները, **դիտարկի** դրանց զարգացումները որպես հայ մարդու ընդհանրական նկարագրի արտահայտություններ: • Ժամանակագրական հաջորդականությամբ **ներկայացնի** 5-րդ դարի հայ մատենագիրներին և նրանց պատմությունները:
	4/4	**Հայ գրականության ոսկեդարը**	• **Դրսևորի** պատասխանատու վերաբերմունք մատենագիրների և նրանց պատմությունների պահ- • պանման, զարգացման, արժևորման գործում: • **Բնութագրի** ոսկեդարի գրականության հերոսներին, **դատողություններ անի** նրանց արարքների վերաբերյալ: • **Արժևորի** հայ գրականության դերը այլ ազգերի գրականությունների շարքում, ինչպես նաև հայ ժողովրդի ինքնության պահպանության գործում:
	18/1	**Մովսես Խորենացի:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	• **Վերարտադրի** հեղինակի կենսագրությունը և **մեկնաբանի** ապրած ժամանակաշրջանը և միջավայրը: • **Մշակի** երևակայական հարցազրույց հեղինակի և նրա ստեղծագործությունների վերաբերյալ: • **Արժևորի** հեղինակի ապրած կյանքը, տվյալ ժամանակաշրջանում բերած նորամուծությունները:
	18/2	**Հայ հին ժողովրդական բանահյուսություն:** Առասպելներ և վիպերգեր, դրանց պատմական հիմքը: Գաղափար առասպելի և վիպերգի մասին: **«Վահագնի ծնունդը»** առասպելը	• **Ներկայացնի** հայ ժողովրդական բանահյուսության ընդհանուր առանձնահատկությունները: • **Արժևորի** ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակութային նշանակությունը: • **Կարդա** և **վերարտադրի** առասպելի բովանդակությունը՝ մեկնաբանելով պատմական ժամանակաշրջանը և իրադարձությունները: • Առասպելը **դիտարկի** որպես մեր ժողովրդի գոյատևման, զարգացման և առաջընթացի նախապայման: • **Գնահատի** անհատի, ընտանիքի, հասարակության ժառանգած ավանդույթները: • **Դիտարկի** դրանց զարգացումները որպես հայ

			մարդու ընդհանրական նկարագրի արտահայտություններ:
	18/3	**«Վահագնի ծնունդը»** առասպելը	• **Ներկայացնի** առասպելի պատմական հիմքը: • **Բացահայտի** Վահագնի կերպարի առանձնահատկությունները: • **Պարզի** կերպարի զարգացման հիմնավորվածությունը: • **Ցույց տա** տեքստի ժանրի կառուցվածքային առանձնահատկությունները: • **Որոշի** տեքստի գլխավոր և երկրորդական գաղափարը: • Բնագիրը **փոխադրի** արևելահայերենի, **ցույց տա** քերականական առանձնահատկությունները: • **Վեր հանի** տեքստում պատկերված ժամանակաշրջանը: • **Ներկայացնի** առասպելում արտահայտված հույզը, զգացմունքը, ապրումը, **համեմատի** իր զգացածի հետ:
	18/4	**«Վահագնի ծնունդը»** առասպելը	• **Ներկայացնի** տեքստի կառուցվածքը, **վերլուծի** երկի վերնագրի կապը բովանդակության հետ: • **Տարբերակի** հեղինակին և պատմողին, փաստերով ապացուցի իր տեսակետը: • Բանավոր և գրավոր համոզիչ խոսքով **ներկայացնի** իր տեսակետը: • **Գտնի, դուրս գրի** կերպարին բնութագրող հատվածները: • **Բացատրի** կերպար, պատկեր ստեղծելու հնարները: • **Համեմատի** կարդացած տեքստը նմանատիպ բովանդակություն ունեցող այլ նյութի հետ: • **Ցույց տա** դրանց նմանությունները և տարբերությունները, **կատարի** ընդհանրացումներ:
	18/5	**«Հայկ և Բել» առասպելի** պատմական հիմքը	• **Ներկայացնի** առասպելի պատմական հիմքը: • **Վերլուծի** առասպելում առկա կոնֆլիկտները և հեղինակի առաջարկած լուծումները՝ բերելով օրինակներ: • Առասպելում ներկայացված իրադարձությունները **համեմատի** պատմական նույն դարաշրջանի հետ՝ բերելով օրինակներ: • **Բացահայտի** գրական կերպարի/հերոսի առանձնահատկությունները և հակադրի կերպարները միմյանց հետ: • **Արժևորի** ստեղծագործության պատմական արժեքը ազգային և համաշխարհային մշակույթում:

	18/6	**«Հայկ և Բել» առասպելի** բովանդակությունը և գաղափարը	• **Ներկայացնի** ժամանակաշրջանի ազդեցությունը հայ ժողովրդի ճակատագրի վրա: • **Վեր հանի** հավերժական (արքետիպային) կերպարին/հերոսին բնորոշ հատկությունները: • **Տարբերի** առասպելը վիպերգից և ժողովրդական բանահյուսության այլ ժանրերից: • **Համեմատի** առասպելը նմանատիպ այլ ստեղծագործության հետ: • **Ընդգծի** գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը/բանալի բառը: • **Վերլուծի** առասպելը՝ օգտվելով հեղինակային և սեփական բառապաշարից: • Տեքստում **ճանաչի** պատկերավորման միջոցները և միմյանցից **զանազանի:** • Նոր սովորած բառերով **կազմի** գրավոր խոսք:
	18/7	**«Հայկ և Բել» առասպելի** կերպարները	• Տեքստից **գտնի** և **ներկայացնի** առասպելի հերոսների արտաքինը նկարագրող, բնավորությունը բացահայտող էական գծերը: • Ստեղծագործաբար **վերաշարադրի** առասպելի բովանդակությունը՝ կիրառելով նոր սովորած բառերը և պատկերավոր արտահայտությունները: • **Նկարագրի** կերպարներն իր բառերով: • **Նկարագրի** կերպարի/կերպարների երկու վարքագիծ: • **Տեքստից** ելնելով՝ բացատրի, թե ինչու հերոսը այդպես վարվեց: • Նոր սկիզբ **հորինի** առասպելին: • Տեքստի մի հատվածը **վերածի** դատողական խոսքի:
	18/8	**«Հայկ և Բել» առասպելի** պատմական արժեքը և նշանակությունը	• **Ներկայացնի** առասպելի պատմական հիմքը: • **Նշի** հայրենասիրական դրվագները, որոնք ազդեցություն ունեցան կռվի ելքի վրա, **պատճառաբանի**: • **Մեկնաբանի** երկի նշանակությունը սերունդների համար: • Ատասպեպի բովանդակությունը **կապի** Հայաստան անվան հետ: • **Մեկնաբանի** առասպելի վերնագրի կապը բովանդակության հետ, նոր վերնագիր **դնի** հատվածին:
	18/9	**«Արա գեղեցիկ և Շամիրամ»** առասպելը	• **Ներկայացնի** առասպելի պատմական հիմքը: • **Վերարտադրի** առասպելի բովանդակությունը՝ ներկայացնելով գաղափարը: • **Որոշի** գլխավոր և երկրորդական գաղափարները: • **Ներկայացնի** ժամանակաշրջանի ազդեցությունը

			հայ ժողովրդի ճակատագրի վրա: • **Բացահայտի** հերոսների արարքների դրդապատճառները: • **Արդարացնի** կամ **մերժի** հերոսներից յուրաքանչյուրին՝ ելնելով սեփական դիրքորոշումից: • **Կարծիք արտահայտի** պատմողի մասին: • **Բնութագրի** յուրաքանչյուր կերպար՝ ելնելով տեքստից: • **Ցույց տա** առասպելի արդիականությունը անցյալում և այսօր:
	18/10	**«Արա գեղեցիկ և Շամիրամ»** առասպելի կերպարները	• **Բացահայտի** առասպելում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, գաղափարների արդիականությունը և գործողությունների կատարման ժամանակագրությունը: • **Վերլուծի՝** ինչ կերպ է արտահայտվում առասպելում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը առասպելի ասելիքի, ոճի, բառապաշարի վրա: • **Մեկնաբանի** առասպելի կառուցվածքի, դիպաշարի առանձնահատկությունները: • **Ներկայացնի** ժամանակաշրջանի ազդեցությունը հայ ժողովրդի ճակատագրի վրա: • **Բացահայտի** հերոսների արարքների դրդապատճառները: • **Արդարացնի** կամ **մերժի** հերոսներից յուրաքանչյուրին՝ ելնելով սեփական դիրքորոշումից: • **վերլուծի** դրական կերպարի/հերոսի առանձնահատկությունները: • **Վեր հանի** հավերժական (արքետիպային) կերպարին/հերոսին բնորոշ հատկությունները:

	18/11	**Առասպելի դաստիարակչական նշանակությունը**	• **Համեմատի** Բելին և Շամիրամին, **գտնի** նմանություններ և տարբերություններ: • **Համեմատի** Հայկին և Արային, **գտնի** նմանություններ և տարբերություններ: • **Արդարացնի** կամ **դատապարտի** հերոսների արարքները՝ սեփական դիրքորոշումն արտահայտելով: • **Հին** աշխարհի պատմությունից **հիշի** և քարտեզում **գտնի** Ասորեստանը, որի մասին հիշատակվում է առասպելում: • **Մեկնաբանի** Արայի մերժումը Շամիրամին՝ բնագրից բերելով օրինակներ: • **Նշի** առասպելի դաստիարակչական նշանակությունը: • **Հիշի** և **թվարկի** առասպելների գեղարվեստական մշակումները: • Տեքստից սովորած նոր բառերը և պատկերավոր արտահայտությունները **կիրառի** գրավոր շարադրանքում:
	8/12	**«Տիգրան և Աժդահակ»** ավանդավեպի կառուցածքը և դիպաշարը	• **Ներկայացնի** ավանդավեպի դիպաշարի կառուցվածքը և դիպաշարի բաղադրիչները: • Ստեղծագործաբար **վերաշարադրի** ավանդավեպի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները: • **Համեմատի** առասպելները և «Տիգրան և Աժդահակ» ավանդավեպը ասելիքի, կառուցվածքի փոփոխության տեսանկյունից: • **Ապացուցի** ավանդավեպի արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր: • **Ներկայացնի** ավանդավեպում առկա հույզեր, հոգեկան վիճակներ: • **Մեկնաբանի**պատմողիդիտանկյան առանձնահատկությունները, **համեմատի** իր հետ:
	3/1	**Թեմատիկ գրավոր աշխատանք 1**	
	8/13	**«Տիգրան և Աժդահակ»** ավանդավեպի բովանդակությունը և գաղափարը	• **Ներկայացնի** ավանդավեպի թեման և բովանդակությունը և պատմական հիմքը: • **Բացահայտի** պատմական իրադարձությունների արձագանքը «Տիգրան և Աժդահակ» ավանդավեպում: • **Մեկնաբանի** պարսից Կյուրոս թագավորի և Տիգրանի դաշինքի ազդեցությունը Աժդահակի վրա: • **Ցույց տա** Աժդահակի կերպարի զարգացումը՝ վտանգը չեզոքացնելու ընթացքում:

	.8/14	**«Տիգրան և Աժդահակ»** ավանդավեպի կերպարները	• **Վեր հանի** Տիգրանի կերպարում մարմնավորված հայ թագավորի լավագույն գծերը: • **Թվարկի** Աժդահակի բնավորության գծերը, որոնք բնորոշ են բոլոր բռնակալներին: • **Բացահայտի** Տիգրանի կերպարի նախատիպը մեր պատմության մեջ: • **Վերլուծի** Տիգրանուհու կերպարը՝ մեկնաբանելով նրա մեջ խտացված հայ կնոջ լավագույն գծերը: • **Նկարի** տեսիլքի խորհրդանիշ:
	.8/15	**«Տիգրան և Աժդահակ»** ավանդավեպի ազգային արժեքները	• **Պարզի**՝ մարդկային ինչ արժեքներն են փառաբանվում ավանդավեպում: • **Ներկայացնի**՝ ինչ արժեքներն են դատապարտվում ավանդավեպում: • **Համեմատի** Տիգրանի և Աժդահակի կերպարները:
	18/16	«**Արտաշես և Արտավազդ**» ավանդավեպը	• **Ներկայացնի** ավանդավեպի թեման ու բովանդակությունը և պատմական հիմքը: • Ստեղծագործաբար **վերաշարադրի** ավանդավեպի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները: • **Համեմատի** առասպելները և «Արտաշես և Արտավազդ» ավանդավեպը ասելիքի, կառուցվածքի փոփոխության տեսանկյունից: • **Ապացուցի** ավանդավեպի արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր: • **Ներկայացնի** ավանդավեպում առկա հույզերը, հոգեկան վիճակները և դրանց ազդեցությունը իր վրա: • **Մեկնաբանի** պատմողի դիտանկյան առանձնահատկությունները, **համեմատի** իր հետ:
	18/17	**Արտաշես և Արտավազդ**» ավանդավեպի կերպարները	• **Վերլուծի** դրական կերպարի/հերոսի առանձնահատկությունները: • **Արդարացնի** կամ **մերժի** հերոսներից յուրաքանչյուրին՝ ելնելով սեփական դիրքորոշումից: • **Վերլուծի** և **բնութագրի** կերպարները սեփական ըմբռնմամբ: • **Ներկայացնի**՝ ինչ կերպ են արտահայտվում ավանդավեպում հույզը, զգացմունքը, ապրումը:
	18/18	**Արտաշես և Արտավազդ**» ավանդավեպի պատմական արժեքն ու նշանակությունը	• **Պարզի** պատմությունից սովորած Արտաշես Ա Բարի թագավորի իշխանության ժամանակաշրջանը և գործունեությունը: • Զուգահեռներ **անցկացնի** ավանդավեպի հետ՝ ներկայացնելով պատմական ժամանակաշրջանը: • **Վերլուծի** Պատմահոր վերաբերմունքը Արտաշեսի կերպարը նկարագրելիս:

			• **Բնութագրի** Արտաշեսին և Արտավազդին՝ մեկնաբանելով նրանց արարքների դրդապատճառները: • **Վերլուծի** հոր և որդու արարքների պատճառահետևանքային կապերը՝ հիմնավորելով երկից բերված տողերով: • **Ներկայացնի** և **մեկնաբանի** այն տողերը, երբ որդին դժգոհում է հորից, ինչո՞ւ: • **Մեկնաբանի** Արտաշեսի անեծքի հետևանքները՝ բնագրից բերված տողերով: • **Նշի** ավանդավեպի գեղագիտական և դաստիարակչական նշանակությունը:
	6/1	**«Սասունցի Դավիթ»** դյուցազներգությունը (էպոս). համահավաք բնագիրը Գաղափար դյուցազներգության մասին	• **Համեմատի** ավանդավեպը դյուցազներգության հետ, **գտնի** ընդհանրություններ և տարբերություններ: • **Մեկնաբանի**՝ ինչ է նշանակում «համահավաք բնագիր» արտահայտությունը՝ համեմատելով նյութի այլ մշակումների հետ: • **Տարբերի** առասպելն ու ավանդավեպը դյուցազներգությունից՝ ներկայացնելով դրանց բնորոշ առանձնահատկությունները: • **Բացահայտի** ժամանակաշրջանը, որում կատարվել են էպոսում նկարագրված իրադարձությունները: • **Պարզի**՝ պատմական ինչ իրողության արձագանքն է հյուսել ժողովուրդը: • **Վերարտադրի** հատվածի բովանդակությունը սեփական բառերով: • **Նշի** բնագրի լեզվական առանձնահատկությունները՝ համեմատելով գրական հայերենի հետ:
	6/2	**«Սասունցի Դավիթ»** դյուցազներգության կառուցվածքը և դիպաշարը	• **Ներկայացնի** «Սասունցի Դավիթ» դյուցազներգության կառուցվածքը, նրա ճյուղերը: • **Թվարկի** յուրաքանչյուր ճյուղի վերնագիրը՝ կապելով բովանդակության հետ: • **Առանձնացնի** դրական ու բացասական կերպարները: • **Մեկնաբանի**՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը էպոսի ասելիքի, ոճի, բառապաշարի, դիպաշարի, կոնֆլիկտի վրա: • **Նշի** ժանրի կառուցվածքի առանձնահատկությունները: • Բացատրի ճյուղերի սերնդակցական կապը՝ հիմնավորելով:

	6/3	**Սասունցի Դավիթ»** դյուցազներգության բովանդակությունը և գաղափարը	• **Վերարտադրի** էպոսի բովանդակությունը՝ գործածելով բնագրային բառապաշարը: • **Ներկայացնի** դյուցազներգության արտահայտած գաղափարները՝ սեփական կարծիք արտահայտելով: • Ստեղծագործաբար **վերարտադրի** երկի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները: • **Բացահայտի** տարբեր ճյուղերի միջև եղած կապերը, **հիմնավորի**: • Տեքստում **գտնի** և **բացատրի** ժանրով պայմանավորված լեզվական իրողությունների կիրառումը (բառագործածություն, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքներ):
	6/4	**«Սասունցի Դավիթ»** դյուցազներգության ճյուղերը	**Բնութագրի** էպոսի իր սիրած հերոսին՝ պատճառաբանելով ընտրությունը: **Ներկայացնի** հերոսների արարքների դրդապատճառները: **Բացահայտի** գլխավոր հերոսներին բնորոշ հատկանիշները՝ հիմնավորելով բնագրից բերված օրինակներով: **Արդարացնի** բացասական հերոսների արարքները՝ հիմնավորելով սեփական դիրքորոշմամբ: Ընտրված հառվածը **փոխադրի** արդի հայերենով: **Ճանաչի** և **զանազանի** պատկերավորման միջոցները: Ըստ տեքստի կամ որևէ հատվածի՝ **գրի** բեմագիր (սցենար), ընկերների հետ **բեմադրի**::
	6/5	**«Սասունցի Դավիթ»** դյուցազներգության կերպարները	• Կարդացած ստեղծագործություններից **ընտրի** հերոսներ/կերպարներ և **հորինի** վերջիններիս բնավորությունն արտահայտող խորհրդանիշներ (կենդանի, իր, գույն և այլն): • Բանավոր և գրավոր **հաղորդի** դեպքերի ընթացքը՝ որպես ականատես, մասնակից կամ կերպարներից մեկի անունից: • **Գրի** փոխադրություն, ստեղծագործական շարադրանք, կարծիք: • Բնագրից մի հատված **վերափոխի** մենախոսության, երկխոսության: • Բնագրի մի հատված **վերածի** արձակի՝ կիրառելով հեղինակի գործածած խոսքի պատկերավորման միջոցները: • **Առաջարկի** գրքի շապիկի նոր ձևավորում և սյուժետային նկարազարդումներ (գույն, պատկեր և այլն)՝ կապելով այդ ամենը տեքստի հետ: • «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը **համե-**

			մատի Հոմերոսի «Ոդիսականի» կամ թեմային առնչվող այլ ժողովուրդների էպոսների հետ, **գտնի** նմանություն և տարբերություն: • **Նկարագրի** Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը՝ բնութագրելով նրանց: • **Ներկայացնի** բնագրում չափազանցության հնարի կիրառման նշանակությունը դրական ու բացասական կերպարները կերտելիս:
	6/6	**«Սասունցի Դավիթ»** դյուցազներգության համամարդկային նշանակությունը	• **Կարդա** «Սասունցի Դավիթ» դյուցազներգության մասին մեծերի գրածները և **գրրի** դատողական բնույթի գրավոր խոսք: • **Հիմնավորի՝** ինչու է դյուցազներգությունը իրավամբ համարվում ժողովրդի համահավաք մտածողության արձագանք: • Բնագրից մի հատված **փոխադրի** գրական հայերենի: • **Բացահայտի** գեղարվեստական հնարների կիրառման նշանակությունը Մըսրա Մելիքի հավաքած բանակը նկարագրելիս: • **Նկարի** ազգային խորհրդանիշները, որոնք առկա են երկում: • **Արժևորի** «Սասունցի Դավիթ» էպոսում արծարծված գաղափարների արդիականությունը: • **Ներկայացնի** «Սասունցի Դավիթի» նշանակությունը համաշխարհային գրականության համատեքստում:
	1	**Գործնական աշխատանք**	**Ստեղծ**ի գիրք
ի գիրք	3/1	**Հոմերոս: «Ոդիսական»** (հատված) դյուցազներգության կառուցվածքը և դիպաշարը	• **Ներկայացնի** Հոմերոսի կյանքն ապրած ժամանակաշրջանի համատեքստում: • **Ներկայացնի** ստեղծագործության կառուցվածքը, դրա մասերը՝ համեմատելով մեր էպոսի կառուցվածքի հետ: • **Մեկնաբանի՝** ինչի հիման վրա է Հոմերոսը ստեղծվել «Ոդիսականը»: • **Ներկայացնի՝** քանի երգից է բաժանված Հոմերոսի «Ոդիսականը», ինչ հիմունքով:
	3/2	**Հոմերոսի «Ոդիսականի»** բովանդակությունը և գաղափարը	• **Ներկայացնի** գործողությունների կատարման վայրը և ժամանակաշրջանը, քարտեզի վրա **ցույց տա:** • **Վերապատմի** հատվածի բովանդակությունը՝ գործածելով հեղինակային բառապաշարը: • Հատվածի գաղափարն **արտահայտի** մեկ նախադասությամբ: • **Գտնի** ընդհանրություն և տարբերություն՝ համեմատելով մեր ժողովրդական էպոսի հետ: • **Համեմատի** Ոդիսևսին Դավթի հետ՝ գտնելով

			ընդհանրություններ: • **Բնութագրի** Պենելոպեին և զուգորդի Խանդութ խանումի հետ:
	3/3	**Հոմերոսի «Ոդիսական»** դյուցազներգության կերպարները և գեղարվեստական արժեքը	• **Վերլուծի՝** ինչ կերպ է ազդում ժամանակաշրջանը, միջավայրը երկի ասելիքի բառապաշարի, դիպաշարի, կոնֆլիկտի վրա: • **Թվարկի** կերպարները: • **Բնութագրի** Ոդիսևսին և համեմատի Դավթի հետ: • **Հաղորդի** տեղեկություններ Տրոյայի մասին և կապի էպոսի բովանդակության հետ: • Բնութագրի ստեղծագործության կին հերոսին՝ Պենելոպեին: • Պենելոպեին **համեմատի** մեր էպոսի կին հերոսների հետ: • **Ներկայացնի** կարծիք «Ոդիսական» դյուցազներգության մասին: • **Գնահատի** երկի արժեքը սերունդների դաստիարակության գործում:
	3/2	**Թեմատիկ գրավոր աշխատանք 2**	
	5/1	**Գրիգոր Նարեկացի:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը Գաղափար տաղերգության մասին	• **Ներկայացնի** Նարեկացու ապրած ժամանակաշրջանը՝ նշելով նրա ստեղծագործության գրական ուղղվածությունը: • Փաստերով **ցույց տա** հեղինակի ընտրած գրական ուղղությանը բնորոշ գծերը: • **Բացատրի** Նարեկացու՝ կերպար ստեղծելու սկզբունքները՝ ըստ որդեգրած գրական ուղղության: • **Ցույց տա** տաղերի ժանրային առանձնահատկությունները, **տարբերի** չափածոյի մյուս ձևերից: • **Ցույց տա** տաղերի լեզվական տարբերությունները: • **Որոշի** հեղինակի միջավայրը ապրած տեղը, և **ցույց տա** քարտեզի վրա:
	5/2	**«Տաղ Վարդավառի»** ստեղծագործության կառուցվածքը	• **Ներկայացնի** հեղինակի ծննդավայրի և գործածած լեզվի մասին: • **Բացատրի** բանաստեղծության կառուցվածքային առանձնահատկությունները: • **Բացատրի** հեղինակի արտահայտված հույզը, զգացմունքը՝ համեմատելով իր զգացածի հետ: • **Մեկնաբանի՝** ինչ պատկերներով է հեղինակը ներկայացնում բնությունը: • **Ցույց տա** տաղի հնչյունական կառուցվածքի նշանակությունը: • **Մեկնաբանի** թեմայում առկա նոր հասկացությունները, նոր բառերը և արտահայտությունները **բացատրի**:

	5/3	**«Տաղ Վարդավառի»** ստեղծագործության այլաբանական բովանդակությունը	• **Ցույց տա՝** Նարեկացին ինչով է տարբերվում շարականների մյուս հեղինակներից: • **Մեկնի** տաղի այլաբանությունը՝ բնագրից բերելով օրինակներ: • **Ներկայացնի** տաղի բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը: • **Կազմի** գրական երկում արծարծվող հիմնական և հարակից հասկացությունների աղյուսակ: • Գրական երկից սովորած, լսած և կարդացած նյութը **վերաշարադրի** ստեղծագործաբար: • **Փոփոխի** նկարագրվող դեպքերի ընթացքը, **մատնանշի** ինքնատիպ լուծումներ և զարգացման հնարավորություններ: •**Ուսումնասիրի** տաղի լեզուն և ոճը, օրինակներով **ցույց տա** գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով: • **Վերլուծի** գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա: • **Գտնի** տաղի բովանդակությանը համահունչ երաժշտություն և **հիմնավորի** ընտրությունը:
	5/4	Բնության պատկերումը **Նարեկացու «Տաղ Վարդավառի»**-ում:	• **Պարզաբանի՝** արդյոք տաղի վերնագիրը համապատասխանում է բովանդակությանը: Ինչո՞ւ: • **Վերլուծի՝** շոշափելի աշխարհն իր զմայլելի գույներով ինչ պատկերներով է ներկայացնում հեղինակը: • **Վերլուծի՝** ինչ իմաստ է խորհրդանշում գոհար վարդը տաղում: • **Մեկնաբանի՝** տաղի քնարական հերոսի որ բարեմասնություններն է գովերգում բանաստեղծը: • Բանաստեղծության բովանդակության մեջ փոփոխություն **կատարի:** • **Հիմնավորի** պատկերավորման միջոցների կիրառության նշանակությունը տաղում:
	5/5	«Տաղ Վարդավառի» բանաստեղծության գեղագիտական արժեքը և Նարեկացու բերած նորությունը:	• **Նշի** Նարեկացու բերած նորությունը բանաստեղծական արվեստում: • **Բացատրի** բաղաձայնական կուտակումների նշանակությունը տաղերում: • **Մշակի** երևակայական հարցազրույց հեղինակի հետ՝ հիմք ունենալով կարդացած տաղերը: • **Ցույց տա** տաղերի հոգևոր նշանակությունն իր հուզական աշխարհի վրա: • Գրաբարյան բնագիրը **փոխադրի** գրական

			հայերենի: • **Արժևորի** տաղերի գեղագիտական նշանակությունը: • **Արժևորի** հեղինակի բերած նորամուծությունները: • **Բացահայտի** և **պարզաբանի** տաղերի արդիականությունը անցյալում և այսօր:
	4/1	**Ներսես Շնորհալի:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	• **Ներկայացնի** Ներսես Շնորհալու կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության: • **Կազմի** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի: • **Թվարկի** հեղինակի նշանավոր ստեղծագործությունները: • **Արժևորի** Ներսես Շնորհալու դերը հայ միջնադարյան գրականության մեջ:
	4/2	**Ներսես Շնորհալու** «Առաւօտ լուսոյ» շարականի ձևը և կառուցվածքը: Գաղափար շարականի մասին	• **Կարդա, մեկնաբանի** «Առաւօտ լուսոյ» շարականը: • **Որոշի** շարականի հիմնական ասելիքը, **կապի** ամբողջ ստեղծագործության գաղափարի հետ: • **Ներկայացնի** շարականի կառուցվածքը և ձևը՝ նշելով դրա տեսակը և առանձնահատկությունները: • «Առաւօտ լուսոյ» ստեղծագործության միջոցով **ճանաչի** մեր ինքնության ակունքները: • **Թվարկի** Շնորհալու կատարած նորամուծությունները մեր գրականության մեջ: • Շարականից սովորածը, լսածը և կարդացածը **վերաշարադրի** ստեղծագործաբար: • **Տարբերի** շարականը բանաստեղծությունից:
	4/3	**Ներսես Շնորհալու** «Առաւօտ լուսոյ» շարականի բովանդակությունը և գաղափարը	• **Ներկայացնի** «Առաւօտ լուսոյ» շարականի բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը: • **Շարադրի** «Առաւօտ լուսոյ» երգի գաղափարը՝ օգտվելով նաև բանաստեղծական տների եռատող կազմության փաստից: • **Կազմի** գրական երկում արծարծվող հիմնական և հարակից հասկացությունների աղյուսակ: • **Ուսումնասիրի և ցույց տա** պատմական ժամանակաշրջանի և անհատի ճակատագրի առնչությունները, անհատի գործունեության նպատակակետը: • **Բնութագրի** երգի քնարական հերոսին:
	4/4	**Շնորհալու** «Առաւօտ լուսոյ» շարականի լեզուն և ոճը	• **Ուսումնասիրի** շարականի լեզուն և ոճը: • **Բացատրի** լեզվի դերը միջավայր, պատկեր, կերպար ստեղծելու, հույզեր փոխանցելու հարցում: • **Վերլուծի** գրողի կիրառած ոճական միջոցների ազդեցությունը ընթերցողի զգացմունքների վրա:

			• **Համեմատի և հակադրի** շարականի բովանդակությունը, լեզվաոճական յուրահատկությունները Նարեկացու տաղերի հետ: • **Ներկայացնի** եզրակացություն՝ շեշտադրելով գրողի բերած նորությունները: • **Դրսևորի** քննական և դատողական մտածողություն շարականն ընթերցելիս: **Գտնի** վեց եռյակներից յուրաքանչյուրի բանալի նախադասությունը և **հիմնավորի** ընտրությունը:
	3/3	**Թեմատիկ գրավոր աշխատանք 3**	
	4/4	**Կիսամյակային կրկնություն 4**	
		ԵՐԿՐՈՐԴ	ԿԻՍԱՄՅԱԿ
	4/1	**Ֆրիկ:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	• **Կազմի** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի: • **Ներկայացնի** Ֆրիկի կյանքը և ստեղծագործության ընդհանուր պատկերը: • **Բացատրի՝** ինչ պատմական ժամանակաշրջանում է Ֆրիկը գրել իր բանաստեղծությունները: • **Ներկայացնի՝** անձնական ինչ ողբերգություն է ապրել Ֆրիկը: • **Արժևորի** Ֆրիկի ստեղծագործության մարդասիրական բնույթը:
	4/2	**«Գանգատ»** բանաստեղծության ձևը և կառուցվածքը	• **Կարդա** Ֆրիկի «Գանգատ» բանաստեղծությունը՝ արձակ վերաշարադրելով դրա բովանդակությունը և **մեկնաբանելով:** • **Պարզի** բանաստեղծության կառուցվածքը և **նշի** բնագրի լեզվական առանձնահատկությունները: • «Գանգատ» բանաստեղծությունից **դուրս գրի** անարդարությունները նկարագրող հակադրությունները: • Պատմության դասագրքից կարդալ թաթար-մոնղոլական տիրապետության շրջանի հայ իրականությանը վերաբերող դասանյութը և իրադարձությունները **համեմատի** Ֆրիկի «Գանգատի» բովանդակության հետ: • **Ցույց տա** բանաստեղծության պատկերավորման միջոցները և **կատարի** բառային աշխատանք:
	4/3	**«Գանգատ»** բանաստեղծության բովանդակությունը և գաղափարը	• **Ներկայացնի** բանաստեղծության հիմնական գաղափարը և բովանդակությունը: • **Ներկայացնի** «Գանգատ» բանաստեղծության մեջ հեղինակի արծարծած խնդիրները: • **Մեկնաբանի** Ֆրիկի ընդվզումը և **ներկայացնի՝** ում է ուղղված այն: • **Հիմնավորի** «Գանգատ» բանաստեղծության

			արդիականությունը՝ բերելով օրինակներ։ • **Բացատրի**՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և իր կերպարը՝ հիմնավորելով օրինակներով։
	4/4	**«Գանգատ»** բանաստեղծության համամարդկային նշանակությունը	• **Արժևորի** բանաստեղծության լեզուն և ոճը՝ հիմնավորելով բնագրից բերված օրինակներով։ • **Արժևորի** հեղինակի կատարած դերը ազգային մշակութային արժեքների պահպանման գործում՝ օրինակներով հիմնավորելով մեկնաբանությունը։ • **Ցույց տա** բանաստեղծության պատկերավորման միջոցները։ • **Ներկայացնի** Ֆրիկի հոգեկան ապրումները՝ ըստ բանաստեղծության։ • **Բացատրի** բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը։ • **Ուսումնասիրի** և **մեկնաբանի** գրողի օգտագործած բառապաշարը և պատկերավորման միջոցները և դրանք գործածի խոսքում։
	4/1	**Նահապետ Քուչակ։** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը։ Գաղափար հայրենի մասին	• **Ներկայացնի** Նահապետ Քուչակի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության։ • **Կազմի** գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի։ • Ընդհանուր գծերով **բնութագրի** հայրենները՝ ըստ տեսակի։ • **Ցույց տա** հայրենի ժանրի առանձնահատկությունները։ • **Ներկայացնի** իր տեսակետը պատմական ժամանակի և գրողի կենսագրության կապի մասին։
	4/2	Նահապետ Քուչակի հայրենները. «Ես աչք ու դու լույս, հոգի...», «Ես այն հաւերուն էի...», «Երբ որ ես պզտիկ էի...», «Երբ սերն ի յաշխարհս եկավ...» Հայրենների թեման և կառուցվածքը	• **Տարբերի** Քուչակի ստեղծագործությունների թեմատիկան և տաղաչափական առանձնահատկությունները։ • **Վերաշարադրի** հայրենների բովանդակությունը՝ ներկայացնելով հեղինակի արծարծած խնդիրները։ • **Ներկայացնի** սիրային հայրենների բովանդակությունը՝ շեշտադրելով հիմնական գաղափարը։ • **Կազմի** հայրեններում արծարծվող հիմնական և հարակից հասկացությունների աղյուսակ։ • Հայրեններից կարդացածը, լսածը և սովորածը **վերաշարադրի** ստեղծագործաբար։ • **Ուսումնասիրի և ցույց տա** պատմական ժամանակաշրջանի և անհատի ճակատագրի առնչությունները, անհատի գործունեության

			նպատակակետը: • **Նկարագրի** հայրենների քնարական հերոսին/ հերոսուհուն՝ օգտվելով սիրո հայրենների բառապաշարից: • **Ընտրի** համապատասխան մեղեդի, որը համահունչ է հերոսուհու զգացմունքներին:
	4/3	**Հայրենների** բովանդակությունը և գաղափարը և դրանց գեղարվեստական արժեքը	• **Կարդալ** Քուչակի հայրենները, **վերաշարադրի** դրանց բովանդակությունը և **մեկնաբանի**: • **Կարողանա** անգիր **արտասանել** հայրենների մի քանիսը: • Բանաստեղծական տեքստը **վերաշարադրի** արձակ՝ կիրառելով բնագրից սովորած պատկերավոր արտահայտությունները: • **Մտապահի** ու **վերարտադրի** գործողությունների զարգացման ընթացքը, քնարական հերոսի ապրումները **համեմատի** իր զգացածի հետ: • **Նկարագրի ու բնութագրի** քնարական հերոսներին:
	4/4	**Հայրենների** գեղարվեստական արժեքը	• **Ներկայացնի** և **արժևորի** հեղինակի հույզերը, զգացմունքները, կիրառած գեղարվեստական հնարներն ու միջոցները: • **Գտնի** տեքստում առկա խորհրդանիշներ, **բացատրի** դրանց նշանակությունը և **նկարի**: • **Գնահատի** հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը: • **Ներկայացնի** Քուչակի լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ: • Հայրեններում **ցույց տա** համեմատությունները, փոխաբերությունները, մակդիրները և **վերլուծի** դրանց դերը՝ գեղարվեստական պատկեր ստեղծելիս:
	4/1	**Սայաթ-Նովա:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	• **Ներկայացնի** հեղինակի կենսագրության հիմնական փաստերն ու ապրած ժամանակաշրջանը, միջավայրը և դրանց ազդեցությունը նրա ստեղծագործության վրա: • Իր մտապատկերում **ձևավորի** հեղինակի կերպարը՝ հայտնի մարդկանց ասույթների միջոցով: • **Ցույց տա** և **նշի** Սայաթ-Նովայի գործածած ժանրը և դրանք համեմատի չափածոյի այլ ժանրերի հետ: • **Արժևորի** Սայաթ-Նովայի դերը հայ միջնադարյան գրականության մեջ: • **Նշի** Սայաթ-Նովայի տաղերի ժանրային

			առանձնահատկությունները:
	4/2	**Սայաթ-Նովա: «**Աշխարհումս ախ չիմ քաշի» տաղի կառուցվածքը	• **Մեկնաբանել՝** ինչ կերպ է արտահայտվում բնագրում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը բանաստեղծի ասելիքի, ոճի, բառապաշարի, տաղի կառուցվածքի վրա: • **Մեկնաբանի** տաղի կառուցվածքի առանձնահատկությունները: • **Տարբերի** խաղերի թեմատիկ առանձնահատկությունները և բնագրի լեզուն: • **Վերլուծի** և **դատողություններ անի** խաղի կառուցվածքի, հիմնական գաղափարի շուրջ: • **Ցույց տա** խաղի պատկերավորման միջոցները և **մեկնաբանի** դրանց դերը կերպար ստեղծելիս: • **Ցույց տա** Թիֆլիսի բարբառին բնորոշ բառերը և **մեկնաբանի**: • **Խաղը** փոխադրի գրական հայերենի:
	4/3	**«**Աշխարհումս ախ չիմ քաշի» տաղի գաղափարական բովանդակությունը	• **Կարդա** Սայաթ-Նովայի խաղը, վերաշարադրի դրա բովանդակությունը արձակ շարադրանքով: • **Վերաշարադրի** խաղի բովանդակությունը՝ ներկայացնելով բանաստեղծի արտահայտած հյուզերը: • **Կազմի** բացատրական բառարան՝ ներկայացնելով Թիֆլիսի բարբառին բնորոշ բառերը և դրանց բացատրությունները: • **Ներկայացնի՝** բանաստեղծն ինչպիսի պատկերավորման միջոցներ է գործածում սիրած էակին գնահատելիս:
	4/4	**«**Աշխարհումս ախ չիմ քաշի» տաղի գեղարվեստական արժեքը	• **Նշի** տաղի գեղարվեստական արժեքը: • **Մեկնաբանի** տաղի ազգային արժեքը՝ համեմատելով իր ժամանակակից գրողների հետ: • Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ **ստեղծի** թեմային վերաբերող տեսադաս կամ սահիկաշար՝ մեկնաբանելով: • **Ներկայացնի՝** ինչ ձևով են արտահայտվում բնագրում հույզը, զգացմունքը, ապրումը, **համեմատի** իր զգացածի հետ: • **Արժևորի** հեղինակի գրական ժառանգությունը:
	3/1	**Թեմատիկ գրավոր աշխատանք 1**	
	8/1	**Նիքայել Նալբանդյան:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	• **Ներկայացնի** հեղինակի կենսագրության հիմնական փաստերն ու ապրած ժամանակաշրջանը, միջավայրը և դրանց ազդեցությունը նրա ստեղծագործության վրա: • Գրավոր կամ բանավոր **շարադրի** հեղինակի գրական դիմանկարը՝ հայտնի մարդկանց

			ասույթների հիման վրա: • **Թվարկի** Նալբանդյանի գործածած գրական ժանրերը և համապատասխան ստեղծագործությունները: • **Արժևորի** հեղինակի դերը հայ գրականության մեջ:
	8/2	**Միքայել Նալբանդյանի «**Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության կառուցվածքը	• **Ներկայացնի** բանաստեղծության կառուցվածքը և առանձնահատկությունները: • Բանաստեղծական երկը **վերաշարադրի** արձակ ձևով և գրական հայերենով: • **Գրի** նամակ հեղինակին՝ բացահայտելով իրեն հուզող հարցերը:
	8/3	**Միքայել Նալբանդյանի «**Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության գաղափարական բովանդակությունը	• **Բացահայտի** բանաստեղծության գլխավոր գաղափարը, ասելիքը: • **Ընդգծի** գլխավոր գաղափարն արտահայտող բանալի բառը, նախադասությունը/ միտքը, **հիմնավորի** բանավոր և գրավոր խոսքով: • Համապատասխան փաստերով **բացատրի՝** ինչպես են արտահայտվում և կապակցվում բանաստեղծության մեջ պատկերված ժամանակաշրջանը և միջավայրը: • **Մեկնաբանի** քնարական հերոսի հույզերն ու ապրումները: • **Բացատրի** պատկերավորման միջոցների նշանակությունը տեքստում: • **Բացատիր** մեր ազգային հիմնի և բանաստեղծության կապը: • **Արտահայտի** սեփական դիրքորոշումը բանաստեղծի մտահոգության հանդեպ • **Համեմատի** իտալացի աղջկան հայ կանանց հետ, **գտնի** նմանություններ և տարբերություններ: • Բանաստեղծությունից **դուրս գրի** և **ներկայացնի** խորհրդանիշներ:
	8/4	**Միքայել Նալբանդյանի «**Ազատություն» բանաստեղծության կառուցվածքը	• **Ներկայացնի** բանաստեղծության կառուցվածքը, դրա տների կապը: • **Համեմատի** տեքստերը՝ ասելիքի, կառուցվածքի փոփոխության տեսանկյունից: • **Վերլուծի** երկի վերնագրի կապը բովանդակության հետ: • **Բացահայտի** քնարական հերոսի ապրումներն ու հույզերը: • **Արտահայտի** սեփական դիրքորոշում բանաստեղծի մտահոգության հանդեպ:
	8/5	**Միքայել Նալբանդյանի «**Ազատություն» բանաստեղծության գաղափարական բովանդակությունը	• Բանաստեղծությունն ուսումնասիրելով՝ **բացատրի** երկի ենթիմաստը, **հիմնավորի** հեղինակի ուղերձը: • Տեքստից ընտրած օրինակներով **ներկայացնի** և

			բացատրի քերականական, պատկերավորման և արտահայտչական միջոցների առանձնահատկությունները: • **Գտնի, դուրս գրի** քնարական հերոսին բնութագրող հատվածները, **բացատրի** պատկեր ստեղծելու հնարները:
	8/6	**Միքայել Նալբանդյանի « «**Մանկության օրեր» բանաստեղծության կառուցվածքը	• **Ներկայացնի** բանաստեղծության կառուցվածքը, դրա տների կապը: • **Համեմատի** տեքստերը՝ ասելիքի, կառուցվածքի փոփոխության տեսանկյունից: • **Վերլուծի** երկի վերնագրի կապը բովանդակության հետ: • **Գրի** թեմատիկ փոխադրություն, ստեղծագործական շարադրանք: • Բանաստեղծական տեքստը **վերափոխի** երկխոսության, կարծիքի: • Բանաստեղծական տեքստը **վերածի** արձակի՝ կիրառելով հեղինակի գործածած խոսքի պատկերավորման միջոցները:
	8/7	**Միքայել Նալբանդյանի «**Մանկության օրեր» բանաստեղծության գաղափարական բովանդակությունը	• Բանաստեղծության ուսումնասիրելով՝ **բացահայտի** երկի ենթիմաստը, **հիմնավորի** հեղինակի ուղերձը: • **Կատարի** սյուժետային նկարագրդումներ (գույն, պատկեր և այլն)՝ կապելով այդ ամենը բանաստեղծական տեքստի հետ: Բանաստեղծությունում ներկայացված վերհուշը **համեմատի** իր մանկության հետ: • **Արժևորի** ազգայինը, սեփական ազգի հերոսական անցյալը: • **Արտահայտի** սեփական տեսակետ թեմայի գաղափարի վերաբերյալ և հանդուրժողական վերաբերմունք **դրսևորի** այլ տեսակետների առկայության դեպքում:
	8/8	**Միքայել Նալբանդյանի բ**անաստեղծությունների դաստիարակչական արժեքը	• Կարծիք **արտահայտի՝** ազատությունը միայն անձնակա՞ն, թե՞ նաև հասարակական արժեք է: Ինչո՞ւ: • **Մեկնաբանի՝** ինչով կուզենար նմանվել բանաստեղծությունների քնարական հերոսներին: Ինչո՞ւ: • **Գտնի** ընդհանրություններ բանաստեղծությունների քնարական հերոսների և հեղինակի անձնական ճակատագրերի միջև: • **Համեմատի** բանաստեղծությունները և **ներկայացնի** յուրաքանչյուրի դաստիարակչական արժեքը ընթերցողի վրա:

	4/1	**Ռաֆայել Պատկանյան:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը	• Հուշերի միջոցով **ստեղծի** գրողի կերպարը և **բնութագրի** նրան՝ որպես մարդ և քաղաքացի: • Նախօրոք հավաքած և ուսումնասիրած փաստերի հիման վրա **վերլուծի** գրողի ապրած ժամանակաշրջանը: • **Ներկայացնի** իր տեսակետը պատմական ժամանակի և գրողի կենսագրության կապի մասին: • **Թվարկի** գրողի ստեղծագործությունների վերնագրերը՝ նշելով թեմատիկան: • **Ներկայացնի** գրողի ստեղծագործությունների համառոտ նկարագիրը:
	4/2	**«Նոր տարի»** բանաստեղծության կառուցվածքն ու բովանդակությունը	• **Ներկայացնի** բանաստեղծության կառուցվածքը, տների տրամաբանական կապը: • **Բացատրի** վերնագրի ու բանաստեղծության բովանդակության կապը: • Կարդացած տեքստից **ստեղծի** նոր տեքստ՝ գործածելով հեղինակի գործածած խոսքի պատկերավորման միջոցները: • **Ներկայացնի** բանաստեղծության ազգային-հայրենասիրական նշանակությունը: • Բանաստեղծությունը **համեմատի** իր կարդացած համանման տեքստի հետ, **գտնի** նմանություններ և տարբերություններ: • Տեքստը **արտահայտի** նկարով կամ խորհրդանիշով: • **Հորինի** մեղեդի կամ **գտնի** համահունչ մեղեդի բանաստեղծության համար:
	4/3	**«Նոր տարի»** բանաստեղծության գաղափարական բովանդակությունը	• **Մեկնաբանի** բանաստեղծության գլխավոր գաղափարը, հեղինակի ասելիքը: • **Ներկայացնի** բանաստեղծության արդիական հնչեղությունը: • **Վերլուծի** տեքստի բովանդակությունը և մեկ նախադասությամբ **ձևակերպի** հիմնական գաղափարը: • **Ներկայացնի**՝ ինչ կերպ են արտահայտվում տեքստում հույզը, զգացմունքը, ապրումը և կապի իր զգացածի հետ: • **Տարբերակի** գրական երկի հեղինակին և պատմողին: • **Բնութագրի** բանաստեղծության քնարական հերոսին:
	3/2	**Թեմատիկ գրավոր աշխատանք 2**	
	4/4	Բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը և գեղագիտական արժեքը	• Պատմելիս **օգտագործի** հեղինակային բառապաշարը, **անվանի** տեքստի գեղագիտական արժեքավոր հատվածները: • **Դուրս գրի** համատեքստային բառերն ու դրանք

			կիրառի խոսքում: • **Մշակի** երևակայական հարցազրույց քնարական հերոսի հետ: • **Ցույց տա** ստեղծագործության արդիականությունը՝ համեմատելով իր և հեղինակի ապրած ժամանակաշրջանները: • **Ներկայացնի** բանաստեղծության դաստիարակչական նշանակությունը:
	6/1	**Խաչատուր Աբովյան:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: Գաղափար պատմավեպի մասին	• Հուշերի միջոցով **ստեղծի** գրողի կերպարը և **բնութագրի** նրան որպես մարդ ու քաղաքացի: • Նախօրոք հավաքած և ուսումնասիրած փաստերի հիման վրա **վերլուծի** գրողի ապրած ժամանակաշրջանը: • **Ներկայացնի** իր տեսակետը պատմական ժամանակի և գրողի կենսագրության կապի մասին: • **Ներկայացնի** գրողի ստեղծագործությունների համառոտ նկարագիրը: • **Թվարկի** գրողի ստեղծագործությունների վերնագրերը: • Գրողի կենսագրական փաստերի, նրա հայրենասիրական գործունեության, կերտած հայրենասեր, կամային հերոսների օրինակով **զբաղվի** ինքնադաստիարակությամբ: • **Ներկայացնի** հեղինակի ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, գաղափարների արդիականությունը և ժամանակագրությունը և **համեմատի** մեր օրերի հետ: • **Տարբերի** և **մեկնաբանի** պատմավեպը արձակի մյուս ժանրերից:
	6/2	**Խաչատուր Աբովյանի** «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ը և նրա կառուցվածքը	• **Ներկայացնի** վեպի կառուցվածքը, նրա մասերը: • **Ներկայացնի** «Վերք Հայաստանի» վեպի ստեղծման պատմությունը: • **Բացատրի՝** ինչ նպատակով է Աբովյանը հիշում Կրեսոսի և նրա համր որդու մասին ավանդությունը: • **Մեկնաբանի** հեղինակի հույզերն ու ապրումները և դրանց ազդեցությունն «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը» գրելիս: • **Ներկայացնի** հեղինակի ապրած ժամանակաշրջանը, տվյալ երկը գրելու շարժառիթները:
	1/1	**Գործնական աշխատանք**	**Պատրաստեն սահիկաշար՝ Աբովյանի կյանքին ու գործունեությանը նվիրված:**

	6/3	**Խաչատուր Աբովյանի** «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանի» գաղափարական բովանդակությունը	• Գրողի կենսագրությունից ելնելով՝ **ներկայացնի** բնագրում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, գաղափարների արդիականությունը և ժամանակագրությունը: • **Կարդա** վեպի «Հառաջաբանը», **մեկնաբանի** կարդացածի արտահայտած ենթատեքստը: • **Նշի** հեղինակի և պատմողի տարբերությունը, վեպում արտահայտված հույզը, զգացմունքը: • **Ճանաչի** գործողությունների կատարման վայրը և **կապի** հայրենի երկրի քաղաքական իրադարձությունների հետ: • Համատեքստային բառերը, սովորած պատկերավորման միջոցները **կիրառի** խոսքում: • **Գնահատի** բնագրի բառապաշարը և **հարստացնի** սեփական բառապաշարը նոր բառերով:
	6/4	Ըստ «Հառաջաբանի»՝ հայ նոր գրականության բովանդակությունը	• **Մեկնաբանի** վեպի «Հառաջաբան»-ում առաջ քաշած հայ գրականության բովանդակության հարցը: • Հատվածում **ցույց տա** հեղինակի հայրենասիրության առավել ցայտուն դրսևորումները: • **Պարզի՝** ինչու է Աբովյանը համարվում հայ նոր գրականության հիմնադիրը: • **Նշի՝** Աբովյանի բերած երեք հիմնական նորությունները մեր գրականության բովանդակության մեջ:
	6/5	Լեզուն և հավատը ազգի պահպանման գործում	• Գրավոր **վերաշարադրի** «Հառաջաբանի» պլան: • **Ներկայացնի** Կրեսոս թագավորի մասին ավանդությունը և դրա կապը «Հառաջաբանի» բովանդակության հետ: • **Վերլուծի՝** ինչու «Հառաջաբանը» իրավամբ դարձավ հայ նոր գրականության զարգացման ծրագիր: • **Մեկնաբանի՝** ինչ դեր ունեն լեզուն և հավատը ազգի պահպանման գործում: • **Գրի** շարադրանք՝ «Հայ ժողովրդի պատմությունը և ներկան» վերնագրով:
	6/6	**«Հառաջաբանի»** պատմական նշանակությունը հայ գրականության պատմության մեջ	• **Ներկայացնի** հեղինակի մտորումները լեզվի մասին: • **Բացատրի** աշխարհաբարը գրական լեզու դարձնելու անհրաժեշտությունը: • **Հիմնավորի** գրականության բովանդակության մասին՝ ըստ «Հառաջաբանի»: • **Մեկնաբանի** գրական հերոսի ընտրության հարցը:
	3/3	**Թեմատիկ գրավոր աշխատանք 3**	

	6/1	**Ուիլյամ Շեքսպիր:** Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր պատկերը: Գաղափար ողբերգության մասին	• Նախօրոք հավաքած և ուսումնասիրած փաստերի հիման վրա **վերլուծի** գրողի ապրած ժամանակաշրջանը: • **Ներկայացնի** իր տեսակետը պատմական ժամանակի և գրողի կենսագրության կապի մասին: • **Ներկայացնի** Շեքսպիրի կենսագրության հիմնական փաստերը, **կապի** դրանք հեղինակի ստեղծագործությունների հետ: • **Գնահատի** Շեքսպիրի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում: • **Արտահայտի** սեփական կարծիք գրողի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը **կապի** իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ: • **Թվարկի** հեղինակի ստեղծագործությունները և **նշի** ժանրը և դրա առանձնահատկությունները: • **Տարբերի** և **ներկայացնի** դրամատիկական ժանրի տեսակները և դրանց առանձնահատկությունները:
	6/2	**Ուիլյամ Շեքսպիրի «Համլետ»** ողբերգության դիպաշարը և կառուցվածքը	• **Համեմատի** գրական սեռերը, ժանրերը, օրինակներով հիմնավորի երկում կերպարի կերտման սկզբունքները: • **Վերլուծի** դիպաշարի զարգացման հաջորդական աստիճանները (նախադրություն, հանգույց, գործողության զարգացման գագաթնակետ, գործողության անկում, լուծում) և **բացատրի** դեպքերի հաջորդական զարգացման հիմնավորվածությունը: • Դիպաշարի մեջ **ցույց տա** տեքստը տեքստում կառույցը: • **Ընկալի** երկի կանոնավոր ռիթմիկ կառուցվածքը, **զգա** ներքին երաժշտականությունը և հանգավորումը (թե՛ արտաքին, թե՛ ներքին): • **Հիմնավորի** սեփական տեսակետը՝ երկից բերված օրինակներով: • Բնագրից ելնելով՝ **ներկայացնի** ժամանակի մարդու ներաշխարհը, **վերլուծի** միջավայրի ու շրջապատի ազդեցությունը հերոսի/հերոսների հոգեբանության վրա: • **Համեմատի** հերոսների արարքները, սեփական վերաբերմունք **արտահայտի** նրանց արարքների նկատմամբ: • **Գնահատի** Համլետի վարքագիծը և իր ապրումների, տպավորությունների հաղորդման համար **ընտրի** ցանկացած գեղարվեստական միջոց:

	6/3	**Ուիլյամ Շեքսպիրի «Համլետ»** ողբերգության բովանդակությունը և գաղափարը	• Կարդացած տեքստերից **ընտրի** պատմողներ և **ստեղծի** վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ: • **Մշակի** երևակայական հարցազրույց հեղինակի և Համլետի հետ: • **Վերլուծի** «Համլետ» ողբերգության առաջին արարը՝ ներկայացնելով գլխավոր գաղափարը, ասելիքը: • **Ընդգծի** գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը/բանալի միտքը, **մեկնաբանի:** • Հեղինակի ստեղծագործությունների միջև զուգահեռներ **անցկացնի՝** ըստ ժանրի, թեմայի և հիմնախնդրի: • Համապատասխան փաստերով **բացատրի՝** ինչպես են արտահայտվում և կապակցվում ողբերգությունում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը: • **Գրի** կարծիք, ակնարկ ողբերգության կերպարներից մեկի մասին:
	6/4	**Ուիլյամ Շեքսպիրի «Համլետ»** ողբերգության կերպարները	• **Ներկայացնի** վերնագրի և բովանդակության **կապի** մասին: • Մեկ նախադասությամբ **սահմանի** որևէ արարի գաղափարը: • **Ընդգծի՝** Շեքսպիրն իր գրվածքում ինչպես է ներկայացրել հերոսի անընկճելի ոգին: • **Համեմատի** իր կարդացած ողբերգությունները, **ցույց տա** դրանց նմանությունները և տարբերությունները: • **Համեմատի** կերպարները միմյանց հետ, գտնի ընդհանրություններն ու տարբերությունները: • **Ներկայացնի**հերոսների արարքների դրդապատճառները: • Բանաստեղծական տեքստը **վերածի** արձակի' կիրառելով հեղինակի գործածած խոսքի պատկերավորման միջոցները: • **Ստեղծի** իր սիրած հերոսի/հերոսների բնավորությունն ու արտաքին հատկանիշներն արտահայտող նկարագրություններ: • Տեքստում **ընդգծի** գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները և դրանք օգտագործի դատողական խոսքում: • **Բնութագրի** երկի կին հերոսներին՝ մեկնաբանելով նրանց արարքները: • **Արտահայտի** իր մտահոգությունը Շեքսպիրի նկարագրած ժամանակաշրջանի և այսօրվա իրադարձությունների վերաբերյալ, կարծիք **արտա-**

			հայտի:
	6/5	**Ուիլյամ Շեքսպիրի «Համլետ»** ողբերգության վերլուծությունը	• **Ներկայացնի** հեղինակի անձնական ապրումներն ու բնության պատկերների զուգակցումը ողբերգության մեջ: • **Որոշի** հեղինակի հույզերը, հոգեկան վիճակը՝ ստեղծագործությունից ելնելով: • **Մեկնաբանի** հերոսների հոգեվիճակի ազդեցութ- • յունը գործողությունների զարգացման վրա: • **Մեկնաբանի** գործողությունների զարգացման • ընթացքը և **ներկայացնեի** իր դիրքորոշումը: • **Բացատրի** և **հիմնավորի** բնագրի սեփական մեկնաբանությունը: • Ողբերգությունից ելնելով՝ սեփական դիրքորոշում • **արտահայտի, դրսևորի** սեր և հարգանք հեղինակի ապրումի, հույզի և ցավի վերաբերյալ: • **Գտնի** դրամատիկական, հուզական վիճակներ արտահայտող տողեր և **համեմատի** իր զգացածի հետ: • **Փոխի** ողբերգության ավարտը՝ ստեղծելով նոր տարբերակ: • Քարտեզում **գտնի** դրամատիկական գործողութ-յունների գտնվելու վայրը: • **Բացահայտի** ողբերգության բովանդակության և ձևի ներքին կապը, նրանց ներդաշնակությունը: • **Գտնի** ու **տարբերի** բնագրի մակդիրներն ու համեմատությունները՝ դրանք ստեղծագործաբար կիրառելով գրավոր կամ բանավոր խոսքում:
	6/6	**Ուիլյամ Շեքսպիրի «Համլետ»** ողբերգության գեղարվեստական և դաստիարակչական արժեքը	• **Վերարտադրի** որևէ արարի բովանդակությունը՝ նոր հերոսներ ներմուծելով: • Հատվածից **ընտրի** հերոսներ և **ներկայացնի** վերջիններիս բնավորությունն ու արտաքին հատ-կանիշներն արտահայտող նկարագրություններ: • **Գնահատի** բնագրի բառապաշարը՝ հարստաց-նելով սեփականը, **օգտագործի** հեղինակային բա-ռապաշարը՝ երկը վերլուծելիս: • Կապեր **գտնի** «տեքստը տեքստում կամ տեքստը տեքստի մեջ» ձևի կիրառման՝ գրականության և արվեստի այլ ճյուղերի միջև: • **Փոխի** ողբերգության գործողությունների զար-գացման ընթացքը՝ ստեղծելով կոնֆլիկտի լուծ-ման նոր տարբերակ: • **Ներկայացնի** մտահոգություն Համլետի ճակատա-գրի վերաբերյալ՝ զուգորդելով իր կյանքի հետ: • **Ամփոփի** բնագրի բովանդակությունը, **պարզի** հեղինակի տեսակետն ու նպատակասլացութ

			յունը: • Ողբերգությունում **առանձնացնի** այն պարբերությունները, որոնցում առկա է եզրահանգում: • **Մեկնաբանի** երկի մենախոսությունների և երկխոսությունների դերի (ինչո՞ւ է օգտագործում գրողը տեքստի մեջ երկխոսություններ), մոտեցումների (ո՞ւմ աչքերով են ընկալված երևույթները, ո՞վ է պատմողը, կփոխվե՞ր որևէ բան, եթե նույն պատմությունը պատմեր մեկ այլ գործող անձ) դրսևորումները: • **Գնահատի** և **արժևորի** ողբերգության բառապաշարը և գործածած պատկերավորման միջոցները:
	5/5	**Նախագծային աշխատանք 5**	
	4/4	**Կիսամյակային կրկնություն 4**	
	4/4	**Տարեվերջյան կրկնություն 4**	